եթէ դաշանց և եթէ պարտուց և եթէ ստացելոց
կատարումն ամենայն գործոց մերոց այսօր այս
եղև որ ամենայն համար 'ի մէնջ մեր անցելոց
բանից համեմատելով փակեցաք, զոր ինչ պա-
կասութիւն 'ի առ և տրէ մերմէ ընդ միմեանց
լցուցաք մնացորդ պարտ մեր ընդ միմեանց ան-
թերի հատուցումն արարաք, և երկուց կող-
մանց գոհութեամբ մին զմին անպարտ արարաք,
և ազատապէս արձակում տուաք միմեանց 'ի
վերայ այս և զամենայն զոր ինչ բան և գործ
որ իսկզբանէ մինչև ցայսօր մէնջ մեր միմեանցէ
ընդ միմեանց անցեալ բոլորովին խփեցաք, և
այսուհետ անյիշելի արարաք հանդերձ ամենայն
կերպիւ թղթոց 'ի մեր երկուց կողմանց ձեռնա-
դրեալք, զոր ինչ 'ի մի կողմանէ առ միւսն որում
ժամանակի և որում ձեռի որ երևեցի անար-
ժան արարաք թուղթ արձակութեանս երկու մի-
մեանց համեմատ գրեցաք և մեք Աթանաս և Կի-
րակոս առաջի վկայից ձեռնադրեցաք և կնքեցաք
որ ըստ իւրաքանչ ոք ունելով մի վասն անհոգս
զինքն պահելոյ սկզբանէ մինչև ցայսօր ամենայն
հարկից որ եղև 'ի մէնջ մեր, գրուեցաւ յայսմ
աւուր 'ի գեօղն մեղրու ապրիլի ամսի 14. յամի
Տեառն փրկչին մերոյ էր 1767.

| | |
|---|---|
| Վկայեմք որ ձեռնա-դրեցին, կնքեցին և յանձնեցին. | Աթանաս որդոյ Կի-րակոսի. } Օ |